Գործ ԵԴ2/0807/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

07.02.2024թ. **ք.Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր՝ Էդ. Ամալյանս ծանոթանալով՝ «ԱՐՄՏԵՔՍՏԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արման Գրիգորյանի կողմից ներկայացված հայցադիմումին ընդդեմ պատասխանող՝ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՄՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի միջև 11.05.2023թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-23-22/5-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 24.01.2024թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Հայցվորի ներկայացուցիչը 31.01.2024թ.-ին հայցադիմում է ներկայացվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ պատասխանող՝ ՀՀ պաշտպանության նախարարության, երրորդ անձ՝ «Էվոկաբանկ» ՓԲԸ-ի՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՄՏԵՔՍՏԻԼ» ՍՊԸ-ի միջև 11.05.2023թ. կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-23-22/5-1» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու մասին 24.01.2024թ. որոշումը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը 31.01.2024թ.-ին մակագրվել է դատավոր Էդ. Ամալյանին, դատավորի աշխատակազմին է հանձնվել 05.02.2024թ.-ին:

Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում պահպանվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-125-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով սահմանված պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք

ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածների 27.2-րդ գլխի իրավական կարգավորումների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները՝ այն է սույն գործով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Էդ. Ամալյան**